ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2016թ. թիվ 378-Ա

ԼՈՒԾԱՐՎԱԾ ՊՈԱԿ-ՆԵՐԻ ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱԶՄՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԲՈՒԺԱԿ-ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԵՏԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 285-Ն որոշման 4-րդ կետի 4.3 և 4.4 ենթակետերի՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. հունիսի 29-ի թիվ 195-Ա որոշմամբ հաստատված «Գարգառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարային հաշվեկշռում հաշվառված գույքը հետ վերցնել և հանձնել «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ իր կազմում ստեղծված Գարգառի ԲՄԿ-ին հանձնելու նպատակով:

2. ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. հունիսի 29-ի թիվ 196-Ա որոշմամբ հաստատված «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարային հաշվեկշռում հաշվառված գույքը հետ վերցնել և հանձնել «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ իր կազմում ստեղծված Գյուլագարակի ԲՄԿ-ին հանձնելու նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. հունիսի 30-ի թիվ 197-Ա /փոփոխություն՝ 2016թ. օգոստոսի 3-ի թիվ 252-Ա/ որոշմամբ հաստատված «Ագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարային հաշվեկշռում հաշվառված գույքը հետ վերցնել և

հանձնել «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ իր կազմում ստեղծված Ագարակի ԲՄԿ-ին հանձնելու նպատակով:

4. ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. հունիսի 30-ի թիվ 198-Ա որոշմամբ հաստատված «Կուրթանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարային հաշվեկշռում հաշվառված գույքը հետ վերցնել և հանձնել «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ իր կազմում ստեղծված Կուրթանի ԲՄԿ-ին հանձնելու նպատակով:

5. «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին՝ ապահովել սույն որոշման 1-4 կետերում նշված գույքի ընդունում-հանձնումը:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր